ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԶՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «22» ապրիլի 2016 թ.

2016թ-ի ապրիլի 22-ին՝ ժամը 12:00-ին, Հայաստանի զարգացման հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, տեղի ունեցավ ՀԶՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Լիլիթ	Գինոսյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի իրավաբան – նախագահ.
Լուսինե	Գալստյանը	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի միջոցառումների կազմակերպման մասնագետ – անդամ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Անի	Բազեյանը	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի գնումների մասնագետ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի երկու անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լիլիթ Գինոսյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՋՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց և վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին:
2. Մասնակիցների կողմից առաջարկված գների, բանակցությունների արդյունքների, առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
4. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՀՋՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գինոսյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 400 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը հայտնեց, որ՝

• ՀՋՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձիք (այսուհետ՝ նաև մասնակիցները).

Հ/հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«ԱՎԻԱՏՈՒՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Թումանյան 2/1
2.	«ԼՈԿԱ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Մ. Մաշտոցի 38

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

• Մասնակիցները հայտերը պարունակող ծրարները կազմել և ներկայացրել են ՀՋՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի (այսուհետ՝ հրավեր) պահանջներին համապատասխան.

• Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

• Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.

Որոշվեց՝

1. Լիլիթ Գինոսյանի և Անի Բազեյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

2. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ, ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ, ԱՌԱՋԻՆ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցները ներկայացրել են հետևյալ գները՝ առանց ԱԱՀ.

Չափա-բաժնի համարը	Ծառայության անվանումը	Մասնակիցների անվանումները և առաջարկած գները՝ (ՀՀ դրամ)	
		«ԱՎԻԱՏՈՒՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	«ԼՈԿԱ» ՍՊԸ
1.	Կանոնավոր օդային փոխադրման (ավիատոմս) ծառայություն	380,000	888,000

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի № 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունը՝ մասնակիցների հետ վարվեցին միաժամանակյա բանակցություններ՝ ներկայացված գների իջեցման նպատակով:

Բանակցությունների արդյունքում «ԱՎԻԱՏՈՒՐ ԳՐՈՒՊ» և «ԼՈԿԱ» ընկերությունների առաջարկած վեջնական գները սահմանվեցին համապատասխանաբար 374 000 ՀՀ դրամ և 888 000 ՀՀ դրամ:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել համապատասխանաբար «ԱՎԻԱՏՈՒՐ ԳՐՈՒՊ» և «ԼՈԿԱ» ընկերություններին:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

3. ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի № 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունը՝

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «ԱՎԻԱՏՈՒՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

4. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն N 1 հավելվածի:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 49-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Գինոսյան _____

Հանձնաժողովի անդամ՝

Լ. Գալստյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Բազեյան _____